Պ-1222-18.12.2025-ՏՀ-011

Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգքրի (այսուհետ՝ օրենսգիրք) 55-րդ հոդվածի 4-րդ մասում 11-րդ կետից հետո «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և լրացնել 12-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«12) բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման դեպքում՝ յուրաքանչյուր մատուցված ծառայության համար էլեկտրոնային առողջապահության համակարգի կողմից գեներացված՝ համապատասխան բժշկական ծառայության անհատականացված նույնականացման ծածկագիրը:»:

Հոդված 2. Օրենսգրքի 380.1-ին հոդվածում կատարել հետևյալ լրացումները.

1) 1.1-ին մասից հետո լրացնել 1.2-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.2. Էլեկտրոնային առողջապահության համակարգին միացած բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող վճարային գործիքների միջոցով վճարումն ընդունելու դեպքում էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը պարտադիր է:».

2) 2-րդ մասում «իրականացման գործարքների» բառերից հետո լրացնել «, և 1.2-րդ մասում նշված՝ բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման» բառերը:

Հոդված 3. Օրենսգրքի 381-րդ հոդվածի 3-րդ մասում 19-րդ կետից հետո «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և լրացնել 20-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«20) բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման դեպքում՝ յուրաքանչյուր մատուցված ծառայության համար էլեկտրոնային առողջապահության համակարգի կողմից գեներացված՝ համապատասխան բժշկական ծառայության անհատականացված նույնականացման ծածկագիրը:»:

Հոդված 4.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2026 թվականի ապրիլի 1-ից:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում անհրաժեշտ փոփոխությունները և լրացումներն ընդունվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո 60 օրացուցային օրվա ընթացքում:

Պ-1222-18.12.2025-ՏՀ-011/1~~0~~ Լրամշակված ~~նախագիծ~~

Երկրորդ ընթերցում

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգքրի (այսուհետ՝ օրենսգիրք) 55-րդ հոդվածի 4-րդ մասում 11-րդ կետից հետո «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և լրացնել 12-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«12) բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման դեպքում՝ ~~ՀԳՄ կտրոնի վրա տպագրվում է~~ յուրաքանչյուր մատուցված ծառայության համար էլեկտրոնային առողջապահության համակարգի կողմից գեներացված՝ համապատասխան բժշկական ծառայության անհատականացված նույնականացման ծածկագիրը~~ և ծառայությունը ստացած քաղաքացու ՀԾՀ~~:»:

Հոդված 2. Օրենսգրքի 380.1-ին հոդվածում կատարել հետևյալ լրացումները.

~~1) 1-ին մասում «գործարքների» բառից հետո լրացնել «, ինչպես նաև բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման» բառերը.~~

~~2~~1) 1 .1-ին մասից հետո լրացնել 1.2-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.2. Էլեկտրոնային առողջապահության համակարգին միացած բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող վճարային

գործիքների միջոցով վճարումն ընդունելու դեպքում էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը պարտադիր է:».

«1.2. Էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը պարտադիր է բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից՝ եթե վճարումն իրականացվել է վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող վճարային այլ գործիքների միջոցով իսկ վճարային քարտերի միջոցով վճարման դեպքում պարտադիր է նաև ոչ էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը:».

32) 2-րդ մասում «իրականացման գործարքների» բառերից հետո լրացնել «, և 1.2-րդ մասում նշված՝ բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման» բառերը:

Հոդված 3. ՕրենսգրքիՕրենքի 381-րդ հոդվածի 3-րդ մասում 19-րդ կետից հետո «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և լրացնել 20-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«20) բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման դեպքում՝ յուրաքանչյուր մատուցված ծառայության համար էլեկտրոնային առողջապահության համակարգի կողմից գեներացված՝ համապատասխան բժշկական ծառայության անհատականացված նույնականացման ծածկագիրը և ծառայությունը ստացած քաղաքացու ՀԾՀ:»:

Հոդված 4.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի ապրիլի- 1-ից:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում անհրաժեշտ փոփոխությունները և լրացումներն ընդունվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո 60 90 օրացուցային օրվա ընթացքում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Պ-1222-18.12.2025-ՏՀ-011/1) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «12) բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման դեպքում՝ յուրաքանչյուր մատուցված ծառայության համար էլեկտրոնային առողջապահության համակարգի կողմից գեներացված՝ համապատասխան բժշկական ծառայության անհատականացված նույնականացման ծածկագիրը»:	Ընդունվել է:	Ընդունվել է:

2.	Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասը հանել, ինչպես նաև փոխել կետերի համարակալումը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3.	Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասով առաջարկվող 1. 2 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1.2. Էլեկտրոնային առողջապահության համակարգին միացած բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող վճարային գործիքների միջոցով վճարումն ընդունելու դեպքում էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը պարտադիր է:».	Ընդունվել է:	Ընդունվել է:
4.	Կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Առաջարկվում է նախագծի 3-րդ հոդվածով Հարկային օրենսգրքի 381-րդ հոդվածի 3-րդ մասում լրացվող 20-րդ կետից հանել «և ծառայությունը ստացած քաղաքացու ՀԾՀ» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
5.	Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասը «380.1» թվից առաջ անհրաժեշտ է լրացնել	Ընդունվել է:	Ընդունվել է:

			«Օրենսգրքի» բառով:		
6.	Կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասում «Օրենքի» բառն անհրաժեշտ է փոխարինել «Օրենսգրքի» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
7.	Կառավարություն	Նախագծի 4-րդ հոդված	Առաջարկվում է նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասում «2026 թվականի հունվարի 1-ից» բառերը փոխարինել «պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող երեսուներորդ օրը» բառերով:	Ընդունվել է մասամբ: «հունվարի 1-ից» բառերը փոխարինվել են «ապրիլի 1-ից» բառերով:	Ընդունվել է:
8.	ԱԺ պատգամավորներ՝ Ծովինար Վարդանյան, Արուսյակ Մանավազյան	Նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասում «90» թիվը փախարինել «60» թվով	Ընդունվել է:	Ընդունվել է: